



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Հայաստան, 0025, Երևան, Կոլյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 12
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը լսելով 2017 թվականի հոկտեմբերի 25-ի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ ներկայացույցները և ելույթները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2016-2017 ուստարվա հաշվետու ժամանակաշրջանում ուսումնամեթոդական վարչության աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար (17-10-12-01):
2. Հանձնարարել առարկայական մեթոդական հանձնաժողովներին ուսումնամեթոդական հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը ներկայացնել՝
 - 1) մինչև 2018 թվականի մարտը կրթական ծրագրերի վերջնարդյունքներից բխող առարկայական ծրագրերում փոփոխություն կատարելու անհրաժեշտության հարցը (17-10-12-02),
 - 2) մինչև 2018 թվականի փետրվարն ամբիոններում բազմաբաղադրյալ ձևաչափով ուսումնական պրոցեսի կազմակերպման և գիտելիքների գնահատման համակարգին անցնելու հստակ ձևաչափերը և ժամանակացույցը (17-10-12-03),
 - 3) մինչև 2018 թվականի մարտն ուսանողի ինքնուրույն աշխատանքի իրականացման ձևաչափերը (17-10-12-04),
 - 4) մինչև 2017 թվականի նոյեմբերն ավարտական ատեստավորման քննական նոր ձևաչափերը, թեստերը և քննական հարցաշարերը (17-10-12-05):
3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ մինչև 2018թ. ապրիլը բարեփոխել կարդացվող դասախոսությունները՝ օգտագործելով ուղղահայաց և հորիզոնական բաղադրիչները, ժամանակակից մոտեցումները և ձևաչափերը (17-10-12-06):
4. Հանձնարարել օտար լեզուների ամբիոնի վարիչին՝ կազմակերպել անգլերեն լեզվի կատարելագործման դասընթացներ՝ ամբիոններից այդ խնդրով դիմած դասախոսների համար (17-10-12-07):
5. Հանձնարարել ուսումնական վարչության պետ Կ. Մ. Բարոյանին և կրթական ծրագրերի բաժնի պետ Ա.Վ. Բայկովին՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 20-ը մշակել և ուսումնամեթոդական վարչության քննարկմանը ներկայացնել III տեսակի թեստերի կազմման վերաբերյալ վարպետաց դասերի անցկացման մեթոդաբանությունը և ժամանակացույցը (17-10-12-08):
6. Դիմել «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կառավարման մարմնին.



- 1) բուհական և հետբուհական նույնանուն ամբիոնների միավորման հարցով (17-10-12-09),
- 2) ուսումնական ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխությունների հարցով (17-10-12-10):
7. Հաստատել «Ընդհանուր բժշկական գործունեություն» մասնագիտությամբ ինտերնատուրայում մասնագիտական ուսուցման համար տիպային ուսումնական պլան-ծրագիրը (17-10-12-11):
8. Հաստատել՝
 - 1) գիտական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 27-ի «Ստուգաբանների և քննությունների անցկացման ու հանձնման կարգը հաստատելու մասին» թիվ 03 որոշման մեջ լրացում կատարելու մասին» գիտական խորհրդի որոշումը (17-10-12-12),
 - 2) գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 3-ի «Ուսանողների անվանական կրթաթոշակների սահմանման և շնորհման կարգը հաստատելու մասին» թիվ 11 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» գիտական խորհրդի որոշումը (17-10-12-13),
 - 3) գիտական խորհրդի 2013 թվականի մարտի 27-ի «Երիտասարդ գիտնականների խորհրդի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 8 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» գիտական խորհրդի որոշումը (17-10-12-14),
 - 4) գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 6-ի «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» թիվ 11 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» գիտական խորհրդի որոշումը (17-10-12-15):
9. Հավանություն տալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2012 թվականի մարտի 30-ի «Ակադեմիական պարտքերի լրացման» 42-Մ հրամանում փոփոխություն կատարելու մասին» ռեկտորի հրամանի նախագծին (17-10-12-16):
10. Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ ուսանողներին (17-10-12-17)՝
 - 1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետ
 - ա. Սոնա Խաչատրյան՝ Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ
 - բ. Արթուր Ալեքսանյան՝ Ռուբեն Յոյանի անվան կրթաթոշակ
 - գ. Արմինե Ալեքսանյան՝ Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակ
 - դ. Բագրատ Հակոբյան՝ Բարդուղիմեոս Ֆանարյանի անվան կրթաթոշակ
 - 2) Ստոմատոլոգիական ֆակուլտետ
 - ա. Լաուրա Հայրապետյան՝ Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ
 - բ. Սոնա Գալստյան՝ Վահան Արծրունու անվան կրթաթոշակ
 - գ. Գեղամ Թունյան՝ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակ
 - 3) Դեղագիտական ֆակուլտետ
 - ա. Մարիամ Գրիգորյան՝ Հակոբ Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ
11. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՄԸ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ

